Արդյո՞ք ես պետք է *կատարյալ* լինեմ

Էշլի Սթարք
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել Արուբայում:

Հենրին դանդաղ մտավ Երեխաների միության սենյակ: Նա ոտքերում ծանրության զգացողություն ունեցավ, մինչ հասավ իր աթոռին:

Նրա ուսուցիչը՝ եղբայր Ռասը, ժպտաց նրան: «Պատրա՞ստ ես խոսել տաճարների մասին»,- հարցրեց նա:

«Այո»,- պատասխանեց Հենրին:

Ինչո՞ւ ասացի դա: Հենրին մտախոհ նստեց: Նա իրեն պատրաստ *չէր* զգում: Ընդհանրապես:

Հենրիի Երեխաների միության դասարանը սովորում էր «Կուզեմ տեսնել տաճարը» երգը:* Նրա դասարանին խնդրել էին խոսել տաճար գնալու մասին:

Բայց Հենրին տխուր էր: Նա ցանկանում էր գնալ տաճար, երբ բավականաչափ մեծ լիներ, բայց զգում էր, որ շատ սխալներ է թույլ տվել:

Հենրիի ընկերները մեկ առ մեկ ոտքի կանգնեցին: Նրանք ուրախ էին և ոգևորված, երբ խոսում էին մի օր տաճար գնալու մասին: Հենրին իրեն ավելի ու ավելի վատ էր զգում:

Հենրին ցանկանում էր տաճար գնալ, բայց զգում էր, որ շատ սխալներ է թույլ տվել:

ԱՐՈՒԲԱՅԻՆ ԵՎԱ ՀԱՐՈՒՆԻ

Ապա եկավ երգելու ժամանակը: Հենրին երեխաների հետ միասին երգեց. «Կպատրաստվեմ, մինչ ես փոքր եմ. սա է իմ սուրբ պարտականությունը»:

Ինչպե՞ս կարող եմ պատրաստվել տաճար գնալուն, երբ այդքան շատ սխալներ եմ թույլ տալիս: Մտածեց Հենրին: Նա հետ ընկավ իր աթոռին:

Երբ երգն ավարտվեց, եղբայր Ռասը մոտեցավ նրան: «Ամեն ինչ լա՞վ է»,- հարցրեց նա Հենրիին:

Հենրին հայացքը խոնարհել ու նայում էր ձեռքերին: Ապա նա մեղմ ձայնով ասաց. «Ես ուզում եմ տաճար գնալ, բայց վախենում եմ, որ արժանի չեմ»: Նա խոր շունչ քաշեց: «Ես միշտ չէ, որ ընտանիքիս հետ համերաշխ եմ լինում: Մոռանում եմ անել տան գործերը: Ես շատ սխալներ եմ թույլ տալիս: Իսկապե՞ս պետք է կատարյալ լինեմ»:

Եղբայր Ռասը մեղմորեն ժպտաց: «Տաճար գնալու համար արժանի լինելը չի նշանակում, որ դու պետք է կատարյալ լինես: Մենք կարող ենք արժանի լինել՝ վստահելով Հիսուս Քրիստոսին և անկեղծորեն փորձելով պահել պատվիրանները: Բոլորս էլ սխալներ ենք թույլ տալիս, բայց կարող ենք ապաշխարել և կրկին մաքուր լինել»:

Հենրին մի փոքր ուղղեց մեջքը:

«Ես վստահ եմ, որ Երկնային Հայրը հպարտանում է քեզնով, քանի որ փորձում ես ավելի լավը լինել»,- ասաց եղբայր Ռասը:

Հենրին մտածեց այն լավ բաների մասին, որ արել էր այդ շաբաթ: Նա մայրիկի հետ ընթրիք էր պատրաստել, օգնել էր քրոջը կատարել տնային աշխատանքը և դպրոցում ողջունել էր մի նոր տղայի:

Հենրիի անհանգստությունը գնալով թուլացավ: Նա գիտեր, որ Սուրբ Հոգին օգնում է իրեն խաղաղություն զգալ:

Երբ եկավ Հենրիի հերթը, նա ժպտաց և ոտքի կանգնեց: «Ես ուզում եմ շարունակել ապաշխարել և ավելի նմանվել Հիսուս Քրիստոսին, որպեսզի մի օր կարողանամ մտնել տաճար»,- ասաց նա:

Հենրին իրեն երջանիկ զգաց, երբ նստեց: Մի օր նա կկարողանար տաճարի ներսում Աստծո հետ սրբազան ուխտեր կապել: Նա ուզում էր լավագույնս պատրաստվել տաճար գնալու համար: ●

* Children's Songbook, *95:*

ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՏԱՃԱՐԱՅԻՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ

Երբ դառնաք 12 տարեկան, դուք կհանդիպեք ձեր եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ՝ տաճարային մկրտություններ կատարելու նպատակով տաճարային երաշխավորագիր ստանալու համար: Նա կհարցնի ձեզ՝ արդյոք դուք հավատում եք Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին: Նա նաև կհարցնի՝ արդյոք դուք փորձում եք գործադրել ձեր լավագույն ջանքերը՝ պատվիրանները պահելու համար: Մի հարց, *որը չեք* լսի, հետևյալն է. «Դուք կատարյա՞լ եք»: Երկնային Հայրը գիտի, որ մենք սխալներ թույլ կտանք: Բայց Նա ուզում է, որ մենք ջանանք պահել պատվիրանները և ճիշտ ընտրություններ կատարենք: Եվ երբ մեղանչենք, Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել: